

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԷՍԷՍԹԻ ՍՊԸ-ն ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
15	<p>Պետք է պատրաստված լինի Էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, Էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված կամ անկյուններին ամրացվեն պոլիմերային կամ ռետինե՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներ: Պետք է ապահովվի Էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարագրողումը պետք է կատարվի որակյալ, հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի Էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է նաև լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Եռահարկ մահճակալի չափսերն են՝ 1530 x 630 x 840 մմ (Ե x L x Բ), այն պատրաստվում է 18 մմ լամինացված Ե0դասի ՓՏՍ-ից: Հավաք վիճակում, այն ունի ուղղանկյունաձև արկղի տեսք: Ներքևից առաջին հարկի երկարությունը՝ 1380մմ, լայնությունը՝ 570 մմ: Մեջտեղի /երկրորդ/ հարկի երկարությունը՝ 1450մմ, լայնությունը՝ 600 մմ: Վերևի /երրորդ/ հարկ երկարությունը՝ 1530մմ, լայնությունը՝ 630 մմ: Յուրաքանչյուր հարկի խորությունը՝ 15-200 մմ: Բացի հենքային սնարներից յուրաքանչյուր հարկն ունի իր առանձին սնարները, որոնց վրա ամրացված է սահամեխանիզմ և անվակներ՝ շարժունակության համար: Առաջին և երկրորդ հարկերն շարժական: Ներքևակների տակ գցվում է ամբողջական 18մմ հաստությամբ լամինացված Ե0դասի ՓՏՍ, որի վրա օդափոխության համար պետք է բացվեն 30 մմ տրամագծով առնվազն երեք անցք: Ներքևակը հենվում է կողերով, լայնությամբ անցնող 18մմ հաստությամբ 200 մմ լայնության լամինացված</p>

ԵՕդասի ՓՏՍ-ից պատրաստված հինգ ամրագոտիների և սնարներին ամրացված դետալների վրա: Ներքնակի նկարագիրը գտիր՝ «Փափուկ գույք և պարագաներ» բաժնի թիվ 6 կետում: Լամինացված ԵՕդասի ՓՏՍ-ի աշխատանքային հարթության բոլոր անկյունները պետք է կլորացվեն, եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC կամ համարժեք), կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Մահճակալի կոնստրուկցիոն բոլոր դետալները հավաքված են պտուտակներով, փայտե չիվիներով և մոլիսիայով: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված և երաշխավորված ամրակցումներով: Գույները նախապես համաձայնեցնել մանկապարտեզի տնօրինության հետ: Ոտքերին պետք է ամրացվեն պլաստիկ խցաններով՝ 8 մմ հաստությամբ: Նմուշները պետք է մինչ մատակարարում համաձայնեցվեն պատվիրատուի հետ : Պետք է սահմանվի երաշխիքային սպասարկում՝ առնվազն 1 տարի, արտադրական թերությունների և հնարավոր անհամապատասխանությունների վերականգնման, վերանորոգման նպատակով: Ապրանքի վրա պետք է կատարվի մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը և այլն: Մակնշումը պետք է կատարվի հայերեն, թույլատրվում է նաև միջազգային լեզվով (մասնավորապես՝ անգլերեն, ռուսերեն), ընթեռնելի տարբերակով: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: Մակնշումն անմիջապես արտադրանքի վրա կատարելու անհնարինության դեպքում թույլատրվում է վերոգրյալ տեղեկատվությունը ամփոփել ուղեկցական թերթիկում և/կամ գրքույկում (կամ համարժեք, օրինակ՝ տեխնիկական անձնագրում):

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ΕΥΕΥΘΗ ΟΤΕС в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-24/24 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
15	